



## «Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների  
վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ «Ինտեգրված ուսուցման  
անհրաժեշտությունը աշխարհագրության ուսուցման  
գործընթացում»

Առարկա՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մելիքսեթյան Սիրվարդ

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ Լոռու մարզի ,Թեղուտի  
միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

## Բովանդակություն

Ներածություն.....

- Գլուխ 1. Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը աշխարհագրության ուսուցման գործընթացում.....
    - 1.1 Աշխարհագրության և կենսաբանության միջառարկայական կապը .....
    - 1.2 Աշխարհագրության և մաթեմատիկայի միջառարկայական կապը
    - 1.3 Աշխարհագրության և պատմության միջառարկայական կապը
    - 1.4 Աշխարհագրության և համակարգչային տեխնոլոգիաների կապը
- Հետազոտական մաս
- Եզրակացություն
- Օգտագործված գրականության ցանկ

## ՆԵՐՎԵՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից փուլում կրթության բնագավառի փոփոխությունները ենթադրում է ուսուցման նոր մոտեցումների և մեթոդների ներդրում որոնք միտված են ուսումնական գործընթացի նկատմամբ դրական վերաբերմունքի և հետաքրքրության խթանմանը, ինչպես նաև ուսումնական գործընթացին սովորողների ակտիվ մասնակցության ապահովմանը:

Կրթության ժամանակակից պահանջները ոչ միայն սովորողին գիտելիքներով ապահովելն է, այլ այդ գիտելիքները կյանքում կիրառելու հմտությունների ձեռք բերումը:

Հանրակրթության առաջնային նպատակներից է անհատների ձևավորումը, զարգացումը և կատարելագործումը:

Հետազոտության նպատակն է՝

- Չարգացնել սովորողների ինտեգրված դասեր պլանավորելու և կազմակերպելու հմտություններ
- Կատարելագործել սովորողի կողմից ուսումնան միջառարկայական մեթոդների կիրառական հմտությունները:

Խնդիրները, որոնք անհրաժեշտ են լուծել նպատակին հասնելու համար:

- Ուսումնասիրել ինտեգրված դասեր պլանավորելու մեթոդական սկզբունքները
- Անցկացնել քննարկումներ դասի մասնակից աշակերտների հետ և բացահայտել դասի հաջողված և թերի կողմերը՝ դասի պլանը կատարելագործելու նպատակով:
- Ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:

# Գլուխ 1. Ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը աշխարհագրության ուսուցման գործընթացում

Ներկա փուլում հանրակրթության գլխավոր նպատակը համակողմանի և ներդաշնակ զարգացած սերունդ դաստիարակելն է: Դրա իրականացման գործում առկա են բազմաթիվ միջոցներ և մեթոդներ:

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերի, որոնք ուսուցման հաջողության կարևոր պայմաններից են: Դասի ժամանակ մի առարկան կապելով մյուս առարկանների հետ դասը ավելի հետաքրքիր և արդյունավետ է դառնում: Որքան հետաքրքրական է դասապրոցեսը, այնքան մեծ է հաջողության հասնելու հավանականությունը:

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը:

Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ: Ինտեգրված դասի պլանավորումը ենթադրում է, տարբեր առարկաների ուսուցիչների համագործակցություն:

Տարբեր առարկաներից վերցրած բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը, որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն, այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:

Այս նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրներ գտնելու կարողությունները:

Այստեղ շատ կարևոր է ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումը, քանի որ նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության արդյունավետությունից է կախված ինտեգրված դասի որակը: Ինտեգրված դասի ժամանակ ինտեգրվող առարկանների բաղադրիչները կարող են

լինել ավել կամ պակաս: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մ եկ առարկայի նեղ շրջանակներից: Ինտեգրված դասը սովորաբար նախապես պլանավորվում է: Դա անհրաժեշտ է և համապատասխանում է ուսումնական ծրագրին: Հաճախ դրանք դասեր են ինտեգրված ըստ թեմայի ընդհանրացումների և գիտելիքների ամրապնդման: Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է համակարգչային և ժամանակակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ներկա փուլում սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով, որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքիր:

Ինչպես պատրաստել միասնական: Նախապատրաստությունը սկսվում է դասի մանրամասն պլանը կազմելով:

Փուլ առ փուլ , քայլ առ քայլ ընթանում է դասը: Յուրաքանչյուր փուլ ցույց է տալիս ինչպես ճիշտ օգտագործել ժամանակը: Իմ կարծիքով պետք է կանխատեսել նաև բոլոր հնարավոր ընդհատումները՝ կապված տեսողական և բաժանվող նյութերի, սարքավորումների և քարտերի մոլտիմեդիայի ուստայնում: Բայց քանի որ աշխատում է երկու դասավանդող, նույնիսկ եթե ինչ-որ պահի առաջատար դեր է խաղացել նրանցից մեկը , երկրորդը չպետք է մնա սովերում, այլ պետք է ակտիվ լինի, վերահսկի սովորողների աշխատանքը, օգնի կամ պատրաստվի հաջորդ փուլին:

Դասի վերջում սովորողները պետք է ինքնուրույն բացահայտեն այդ միջառարկայական կապը, նպատակը:

Ինտեգրված ուսուցման նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել , ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր և ոչ ստիպողական մեթոդներով:

Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում: Այն նպատակ ունի ուսուցչին օգնել հարմարվելու վառ, աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին: Ինտեգրված դասի արդյունքում, ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքներ, հետազոտում է, ապա ներկայացնում դպրոցում, որը խրախուսվում է:

Այստեղ սովորողին չես ստիպում կատարել, նա այն անում է ինքնակամ, հաճույքով:

Ինտեգրված կրթությունը մանկավարժական գործընթացի կարևորագույն բնագավառներից մեկն է:

Մանկավարժության ինտեգրման խնդիրները ուսումնասիրվում են տարբեր հետազոտողների աշխատանքներում: Վ. Վ. Կրանսկու , Ա. Վ. Պետրովսկու , Ն. Ֆ. Թալինյանի ստեղծագործություններում հատուկ երևում է այլ գիտությունների հետ մանկավարժության ինտեգրման խնդիրների կապը:Գլեյզերը և Վ. Ս.Լեդները բացահայտում են կրթության բովանդակության ինտեգրման ուղիները:Վ. Կ.Կարոլևսկու աշխատություններում բացահայտվում են երեխայի վրա կրթական ազդեցությունների ինտեգրման խնդիրները:Ինտեգրման սկզբունքը ենթադրում է ուսուցման գործընթացի բոլոր տարրերի փոխկապակցում և համակարգերի միջև կապ:Այն առաջատար է առաջադիմության զարգացման մեջ,որոշելով դասընթացի բովանդակությունը,ձևերն ու մեթոդները:

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է որն իր մեջ ներառում , միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը:

Ինտեգրված դասի տևողությունը տարբեր է ,բայց հիմնականում օգտագործում են երկու կամ երեք դասաժամ միավորված մեկ դասի մեջ:

Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան,փոփոխել ուսումնասիրության շրջանակները ,խորացնել հասկացողությունը, հստակեցնել օրենքներն ու հասկացությունները,ընդհանրացնել թեման,միավորել սովորների փորձն ու նրա ըմբռնման տեսական մասը համակարգել ուսումնասիրված նյութը:

Միջառարկայական կապերի ստեղծումը աշխարհագրության դասաժամերին ունի բազմակողմանի նշանակություն: Այն ապահովում է աշակերտների բազմակողմանի զարգացում, հաղորդվող նյութի արագ և հեշտ յուրացում, աշակերտների մոտ հետաքրքրասիրության մեծացում, սեր առարկայի հանդեպ:

Ինտեգրված դասերի անցկացումը նպաստում է ուսումնական գործնեության նկատմամբ մոտիվացիայի բարձրացմանը, համագործակցային կարողությունների զարգացմանը, ուսուցման արդյունավետության բարձրացմանը և միջառարկայական կապերի ամրապնդմանը:

Ցանկացած դաս, իր կառուցվածքով կարող է լինել ինտեգրված, եթե այն

անցկացնելու համար ներգրվում է այլ գիտություններից կամ ուսումնական առարկաներից ձեռք բերած գիտելիքները, հմտությունները, վերլուծության արդյունքները, որոնք հիմնականում, ուղղված են այդ խնդիրների պարզաբանմանն ու լուծմանը:

Ինտեգրված դասի առավելությունները

Բարձրացնում է սովորողների մոտիվացիան, ձևավորում է ճանաչողական հետաքրքրություն որը նպաստում է ուսումնառության մակարդակի բարձրացմանը:

Երևույթ, առարկան դիտարկում է տեսական, գործնական, կիրառական տեսանկյուններից:

Նպաստում է գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը օգնում է խորապես հասկանալ բառի նշանակությունը:

Թույլ է տալիս յուրաքանչյուր աշակերտի ներգրավվել ակտիվ աշխատանքի մեջ դասի յուրաքանչյուր պահի

Սովորողի մոտ ձևավորում է վերառարկայական ռացիոնալ հմտություններ:

## Աշխարհագրության և կենսաբանության միջառարկայական կապ

Այս բնագիտական առարկաները սերտորեն կապված են միմյանց հետ քանզի երկիր մոլորակի բնությունն իր մեջ ներառում է բուսական և կենդանական աշխարհը, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում է կենսաբանությունը: Աշխարհագրական թաղանթի ոլորտներից մեկը՝ կենսոլորտը կազմված է տարատեսակ կենդանի օրգանիզմներից, որոնք հարմարվել են տվյալ միջավայրին, որտեղ տարածված են:

Երկրագնդի վրա կենսոլորտը ունի անընդմեջ տարածում: Մերձբևեռային շրջաններում և անապատներում այն բավականին ընկճված է, օրգանիզմների քանակը քիչ է, իսկ մնացած տարածքներում բազմազան է ու հարուստ: Այդ օրգանիզմների և միջավայրի ամբողջությունը հայտնի է Էկոհամակարգ անունով, որի գլխավոր հատկանիշներն են ինքնակարգավորումը և ինքնավերականգնումը: Բոլոր Էկոհամակարգերում յուրաքանչյուր բուսատեսակ և կենդանատեսակ ունի իր որոշակի տեղն ու դերը և մյուսների հետ փոխադարձ ու կայուն կապերի մեջ է: Ամբողջ կենսոլորտը նման կապերի չափազանց բարդ ցանց է:

Կենսանի օրգանիզմների ակտիվ մասնակցությամբ կենսոլորտում տեղի է ունենում նյութերի շրջապտույտ: Կատարվում է լուսասինթեզ, որի ընթացքում սիրթեզվում են օրգանական նյութեր: Այդ է պատճառը, որ կենսաբազմազանության պահպանումը աշխարհի շատ երկրների գլխավոր ռազմավարությունն է:

Աշխարհագրության և կենսաբանության ինտեգրված դասի օրինակ է ինտերդ-դասարանի Չայստանի աշխարհագրության բուսականությունը և կենդանական աշխարհը:



## Աշխարհագրության և մաթեմատիկայի կապը

Բոլորին հայտնի է, որ աշխարհագրությունը հնարավոր չէ պատկերացնել առանց ճշգրիտ չափումների և հաշվարկների; Դրանք օգտագործվել են դեռևս մեր թվարկությունից առաջ և առավել կարևոր են արդի ժամանակաշրջանում; Մաթեմատիկական եղանակները լայնորեն կիրառվում են աշխարհագրական հետազոտությունների բոլոր մակարդակներում՝ տվյալների հավաքման ու նախնական մշակման, դասակարգման, ընդհանրացման, վերլուծության և կանխատեսման; Մաթեմատիկական օգնում է հասկանալ մասշտաբը, հաշվարկել գետի ծախսը, բնակչության թիվը և շարժը, բերքատվության ցուցանիշը, բեռնափոխադրումների ծավալը և այլն; Ցանկացած գործնական աշխատանք կատարելու ժամանակ աշխարհագրության դասին կատարում ենք տարատեսակ հաշվարկներ, կառուցում գրաֆիկներ և այլն;

Այսպիսով՝ մաթեմատիկական մեթոդներն օգնում են նկարագրական աշխարհագրական ուսումնասիրությունները դարձնելու կառուցողական-կիրառական; Աշխարհագրության և մաթեմատիկայի ինտեգրված դասի օրինակ է 10-րդ դասարանի «Բնակչության միգրացիա» դասը, որի ընթացքում պետք է հաշվել միգրացիայի մնացորդ, ծավալ, ինտենսիվության գործակից և այլն;

## Աշխարհագրության և պատմության միջառարկայական

### կապը

Շատ սերտ է նաև աշխարհագրության և պատմության միջառարկայական կապը: Իզոլը չէ, որ նախկինում մանկավարժական ինստիտուտն ուներ պատմաաշխարհագրական ֆակուլտետ:

Աշխարհագրության ուսուցման գործընթացում շատ հաճախ ենք մենք օգտագործում պատմության առարկայից ձեռք բերած գիտելիքները և հակառակը: Մասնավորապես հայոց պատմության գիտելիքներն օգտագործում ենք Հայաստանի աշխարհագրության ուսուցման պրոցեսում: Այս երկու առարկաների ինտեգրված դասի օրինակ է, <<Խոշոր քաղաքները >> հայոց հնագույն մայրաքաղաքների հետ:

## Աշխարհագրության և համակարգչային տեխնոլոգիաների կապը

Ժամանակակից կրթությունը անհնար է պատկերացնել առանց տեղեկատվական համակարգերի կիրառման, որի դերն ու նշանակությունը օրեցօր մեծանում է:

Չափազանց արդյունավետ են << Աշխարհագրություն>> և << Ինֆորմատիկա>> առարկաների ինտեգրված դաս:Ստորև ներկայացնեմ ինտեգրված դասի մեկ օրինակ:

Ինտեգրված դաս

8-րդ դասարան

<<Աշխարհագրություն>> և << Ինֆորմատիկա >> առարկաներից

Դասի թեման

\*Աշխարհագրություն՝ << Գերմանիայի Դաշնային Հանրապետություն>>

\*Ինֆորմատիկա <<Power Point>>

Դասի նպատակը

\* Կարողանա համացանցից գտնել օգտակար տեղեկատվություն հանձնարարված թեմայի վերաբերյալ:

\* Կարողանա աշխատել <<Power Point>> ծրագրով:

\*Պատրաստի և ներկայացնի Գերմանիային վերաբերվող նյութեր:

Դասին կկատարվի խմբային աշխատանք:

Նախօրոք կազմված խմբերը կհավաքեն տեղեկություններ:

Ցուրաքանչյուր խումբ կներկայացնի իր աշխատանքը:

Դասի վերջում կունենանք հետևյալ արդյունքները:

- Սովորողները կխորացնեն իրենց գիտելիքները աշխարհագրություն առարկայից:
- Համացանցում կկարողանան կառավարել տեղեկատվական հոսքերը:
- Կհմտանան <<Power Point>> ծրագրի գործածության մեջ:
- Կսովորեն օգտվել էլեկտրոնային գրադարաններից:

Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց:

Նման դասերի ժամանակ կարելի է իրավիճակներ ստեղծել, որ սովորողը մտածի և ինքնուրույն հասկանա առաջադրված խնդրի լուծման եղանակները:

## Յետագոտական մաս

Ընտրել են բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների խումբ:  
Յետագոտությունը կատարել են ուսուցիչներին հարցադրումներ ուղղելով: Սույն հարցաշարը նպատակ ունի ուսումնասիրել ուսուցիչների վերաբերմունքը ինտեգրված դասերի կազմակերպմանը, որպես ուսուցման որակի բարձրացման արդյունավետ միջոց:

1. Կարևորո՞ւմ եք ինտեգրված դասերի կազմակերպման անհրաժեշտությունը որպես գիտական գիտելիքների բարձրացման արդյունավետ միջոց:

- Այո
- Ոչ

2. Արժե՞ հաճախակի իրականացնել ինտեգրված դասեր:

- Այո
- Ոչ

3. Թվարկել ինտեգրված դասերի դրական կողմերը:

4. Կիսո՞ւմ եք այն կարծիքը, որ ինտեգրված դասերի շնորհիվ սովորողը տիրապետում է համակարգված մտածողության:

- Այո
- Ոչ

Յետագոտության արդյունքները ցույց տվեցին, որ ուսուցիչների 90% առավելություն է տալիս ինտեգրված դասերին:

Նմանատիպ հարցում են իրականացրել նաև սովորողների շրջանում և եկել այն համոզման, որ սովորողները նույնպես այն կարծիքին են, որ ինտեգրված դասերի ընթացքում ավելի լավ են պատկերացնում նյութը, գիտելիքները ավելի մնայուն են և մեկ դասի ընացքում ձեռք են բերում համակողմանի գիտելիքներ: Կարճ ասած այն ավելի արդյունավետ և հետաքրքիր է:

## Եզրակացություն

Հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ ժամանակակից կրթական գործընթացում անչափ կարևոր է ինտեգրված ուսուցումը: Հատկապես բնագիտական առարկաների համար, այն պարզապես անհրաժեշտություն է:

Բնության, նրա առանձին բաղադրիչների փոխացդեցության ու կապերի բացահայտմամբ զբաղվում է ոչ միայն աշխարհագրությունը, այլև ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը: Հետևաբար միայն ինտեգրված մոտեցումը հնարավորություն կտա լիարժեք և համակողմանի ուսումնասիրել այս կամ այն երևույթը բացի այդ առանց մաթեմատիկական ճշգրիտ հաշվարկների հնարավոր չէ պատկերացնել աշխարհագրություն գիտությունը, սակայն բնագիտական առարկաների հետ մեկտեղ շատ սերտ է կապը հումանիտար առարկաների հետ, ինչպիսիք են հատկապես պատմությունը, հայոց լեզուն և գրականությունը, հասարակագիտությունը:

Ընթանալից կարելի է ասել, որ ժամանակակից կրթական համակարգը պահանջում է շարունակաբար զարգացնել միջառարկայական կապերը:

Որպեսզի կարողանան ձևավորել բազմակողմանի զարգացած հայրենասեր սերուն, ով կվարի առողջ ապրելակերպ, կունենա բնության ու շրջապատի հանդեպ հոգատար վերաբերմունք և իր ստացած գիտելիքները կկիրառի ի շահ մարդկությանը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Առնաուդյան և այլոք <<Ինտեգրված թեմատիկ միավորներ>>, Երևան 2003թ.
2. Մանուկյան Ս. << Մանկավարժական և աշակերտական դասանպատակները>> Երևան 2003թ.
3. Աշխարհագրություն 10-րդ դասարան, Երևան 2014
4. Աշխարհագրություն 11-րդ դասարան, Երևան 2017թ.
5. Մինասյան Ա. <<Աշխարհագրության ուսումնասիրան մեթոդներն ու միջոցները>> Երևան 2011թ.
6. Екжанова Е, А, Резникова Е, В, << Основы и